ՔԵՐԾՆԱՈՐԱԿԱՆ ԲԱՆԵՐ

ՍՈՎՈՐԵՔ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ: ԱՊԱ ՀԵՏԵՎԵՔ ՈՒՂՈՒՆ ԵՎ ԿԱՏԱՐԵՔ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ:

# Միսիոներական մարտահրավեր



Միսիոներները հանդիպում են նոր մարդկանց և զրուցում նրանց հետ:



Որոշ միսիոներներ սովորում են նոր լեզու:

Միսիոներները կիսվում են իրենց տաղանդներով: Ոմանք եկեղեցում նվագում են դաշնամուր, սովորում են սուրբ գրություններ, որպեսզի կիսվեն դրանցով կամ օգտագործում են այլ տաղանդներ՝ օրհնելու ուրիշներին:





Միսիոներները աղոթում են ուրիշ-ների համար:

Միսիոներնե-րը ուրիշներին սովորեցնում են Հիսուս Քրիստոսի մասին:



ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍԵՍՍԻ ՖՐԱՆՍԻՍԻ

Մտածեք ձեր ունեցած տաղանդի մասին: Ապա օգտագործեք այդ տաղանդը՝ ծառայելով որևէ մեկին:



Սովորեք ասել մի քանի բառ նոր լեզվով: Գուցե սովորեք ասել «Հիսուսը սիրում է ինձ» կամ «Աստծո զավակն եմ»:



ԱՎԱԳ ԽՄԲԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ծանոթացեք ձեր դասարանում կամ հարևանությամբ ապրող մեկի հետ, ում դուք չեք ճանաչում:



Պատմեք ձեր ընկե-րոջը կամ ընտանիքի անդամին մի բան, որ սովորել եք Հիսուսի մասին Երեխաների միությունում:





Մտածեք ձեզ ծանոթ երկու կամ երեք մար-դու մասին և աղո-թեք նրանց համար: Խնդրեք Երկնային Հորը օրհնել նրանց: